ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2023 թվականի N 981-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 718-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի N 2.1 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ կետերով.

«

4.1	Դեղատանը կաթիլաներարկման լուծույթներ չեն պատրաստվում (բացառությամբ բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող դեղատների)	«Դեղերի մասին» օրենք, հոդված 19, մաս 2				1	Տեսողական	
4.2	Դեղատանը պատրաստված և մանրակշռված դեղերն իրացվում են նույն դեղատնից	«Դեղերի մասին» օրենք, հոդված 19, մաս 4				1	Տեսողական	

»,

բ. աղյուսակի 5-րդ կետի «Հղում նորմատիվ ակտին» սյունակից հանել «Դեղերի մասին» օրենք, հոդված 25, մաս 9» բառերը,

գ. աղյուսակի 6-րդ և 7-րդ կետերի «Հարց» սյունակը «վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստում անցած» բառերից հետո լրացնել «(շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ունեցող)» բառերով,

դ. աղյուսակի 6-րդ կետի «Հղում նորմատիվ ակտին» սյունակը «Կառավարության 2002 թ. հունիսի 29-ի N 867 որոշում, հավելված 3, կետ 12» բառերից հետո լրացնել «, Առողջապահության նախարարի 2022 թվականի մայիսի 13-ի N 28-Ն հրաման» բառերով,

ե. աղյուսակի 7-րդ կետի «Հղում նորմատիվ ակտին» սյունակը «Կառավարության 2002 թ. հունիսի 29-ի N 867 որոշում, հավելված 3, կետ 13» բառերից հետո լրացնել «, Առողջապահության նախարարի 2022 թվականի մայիսի 13-ի N 28-Ն հրաման» բառերով,

զ. աղյուսակը 15.1.7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1.8-րդ և 15.1.9-րդ կետերով.

«

15.1.8	Դեղատունը ձևավորված է «Դեղատուն» վերտառությամբ կանաչ խաչի նշանով, որն ուղղահայաց փակցված է դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) արտաքին պատին	Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում, հավելված N 3, կետ 38				1	Տեսողական	

15.1.9	Դեղատան լուսավորվող խաչը չթարթող է և լուսավորում է դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) միայն աշխատանքային ժամերին	Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում, հավելված N 3, կետ 38				1	Տեսողական	

».

2) հավելվածի N 2.1 ստուգաթերթի «Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝**

1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենք.

2. Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում.

3. Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1256-Ն որոշում.

4. Կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշում.

5. Առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի N 05-Ն հրաման.

6. Առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 21-ի N 2-Ն հրաման.

7. Առողջապահության նախարարի 2022 թվականի մայիսի 13-ի N 28-Ն հրաման:».

3) հավելվածի N 2.2 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակի 3-րդ կետի «Հարց» սյունակում «Դեղերի արտադրության լիցենզիա ստացած դեղերի արտադրողն ունի «Պատշաճ արտադրական գործունեության» հավաստագիր՝ կատարված մասնագիտական ընդհանուր դիտարկման հաշվետվության հիման վրա» բառերը փոխարինել «Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրությունն իրականացվում է «Պատշաճ արտադրական գործունեության» կանոնների համաձայն» բառերով, իսկ «Նորմատիվ իրավական ակտին» սյունակում «4» թիվը փոխարինել «3» թվով,

բ. աղյուսակը 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ, 13.1-ին, 13.2-րդ, 13.3-րդ, 13.4-րդ և 13.5-րդ կետերով.

«	13.	Դեղ արտադրողի կողմից չեն իրացվում.					«Դեղերի մասին» օրենք, հոդված 23, մաս 2		
	13.1	Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքեր				2		Փաստաթղթային, փորձաքննություն	
	13.2	որակի պահանջներին չհամապատասխանող դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքեր				2		Փաստաթղթային, փորձաքննություն	
	13.3	պիտանիության ժամկետն անցած դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքեր				1		Տեսողական	
	13.4	գրանցումն ուժը կորցրած ճանաչված դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքեր				2		Փաստաթղթային, փորձաքննություն	
	13.5	գրանցումը կասեցված դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքեր				2		Փաստաթղթային, փորձաքննություն	

».

4) հավելվածի N 2.2 ստուգաթերթի «Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝**

1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենք.

2. Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում:».

5) հավելվածի N 2.3 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակը 1.5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.6-րդ կետով.

«	1.6	Հայաստանի Հանրապետություն ներմուծումը մերժված դեղեր են	«Դեղերի մասին» օրենք, հոդված 21, մաս 4, Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշում, հավելված N 1, կետեր 36 և 75				2	Փաստաթղթային	»,

բ. աղյուսակը 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-ին կետով.

«	11.1	Դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակա-րարն ունի «Պատշաճ բաշխման գործունեության» հավաստագիր:	«Դեղերի մասին» օրենք, հոդված 24, մաս 6				2	Փաստաթղթային		»,

գ. հավելվածի N 2.3 ստուգաթերթի հարցաշարի 18-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6) հավելվածի N 2.3 ստուգաթերթի «Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմա-տիվ իրավական ակտերի հիման վրա՝» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝**

1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենք.

2. Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202 որոշում:»:

2. Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ